ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԲԱՅՑ ՈՉ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ, ԱՅԼ՝ ՆՎԱՃՈՒՄ

Հարցազրույց ՀՀ պաշտպանության նախարար պարոն ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ հետ

Նախարարի հետ հարցազրույց վարելու համար նրա աշխատասենյակ ներկայացա 1993 թ. դեկտեմբերի 24–ին, ժամը 19–ին: Որքան էլ փարօրինակ է, «Հայ զինվորը» , նախարարության պաշտոնաթերթը, առաջին անգամ էր նախարարին իր էջերը տրամադրելու առաջարկ անում: Մեր թերացումն էր, և ես այն խոստովանեցի: Մեր զրույցը, որը պետք է պարզեր նրա տարեմուտի մտածումները Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության, նոր-նոր ավարտված աշնանային զորակոչի և այլ հարցերի մասին, ընդմիջվում էր արցախյան ճակատներից և Հայաստանի սահմաններ գոտիներից եկող հեռախոսազանգերով: Նոր տարվա նախաշեմին Ադրբեջանը, երևում է, մեկ անգամ էլ է ուզում իր բախտը փորձել արցախյան հիմնահարցը ուժային մեթոդներով լուծելու իր որդեգրած միակ քաղաքականության մեջ: Դե ինչ, ուժի դեմ՝ ուժ: Կան զոհեր: Նախարարի հայացքը մի պահ ցավագին է դառնում, բայց միայն մի պահ: Նորից վերագտնում է իր հանգստությունը: Հենց դրա համար էլ նախարար է, որ ամեն ինչ հանգիստ ընդունի: «Անհանգստանալու հարկ չկա, ամեն ինչ կարգին է, - ասում է նա և ժպտալով իմ կողմը շրջվում: - Լսում եմ «Հայ զինվորին»:

- Պարոն նախարար, ես մեկ տարի անցավ, հաղթանակների և կսկիծների, փորձությունների և սպասումների տարի, որի յուրաքանչյուր օրը իրադարձություն էր: Տարիները, ինչպես և մարդիկ, իրենց անունն ունեն, ի՞նչ անուն կտայիք այս տարվան:

- Նախ ասեմ, որ տարին դեռ չի անցել: Դեռևս յոթ օր կա: Ժամանակաշրջանը, որի մեջ մենք ապրում ենք, դեպքերով, իրադարձություններով ու գյուտերով հղի ժամանակաշրջան է: Այս պարապանքում օրն էլ իր անունն ունի, ժամն էլ, վայրկյանն էլ: Չի բացառվում, որ մինչ ամանոր մի այնպիսի բան պատահի, որ տարին իր անունը փոխի: Այո, դառնությունների և ուրախությունների տարի էր: Դառնությունների, որովհետև մեր զինակիցներից շատերն ընկան: Փառք և պատիվ նրանց: Նրանց արյամբ մեր հողը հարստացավ, մեր հողը թանկացավ, մեր հողը ավելի Հայրենիք դարձավ: Փառք և պատիվ նրանց մայրերին, որոնք իրենց մատաղացու զավակների նահատակությամբ սրբագործեցին պատմությունը: Փրկվեց հայ կովողի պատիվը: Աշխարհի առաջ պարզվեցավ եղավ մեր ազգը: Ուզում եմ զոհվածների մտերիմներին ասել՝ հարազատներս, ողջերը մեղավոր չեն, որ իրենք չեն զոհվել: Ուզում եմ, որ զոհվածների մայրական ընկերներն էլ չերազացվեն այդ մեղավորության զգացումից: Պատերազմի թվաբանությունն է՝ ոչ որի կյանքը երաշխավորված չէ. Նաև ուրախությունների տարի էր. առաջին անգամ 1993-ին էր, որ հասանք մեծ հաջողությունների: Ռազմանահատը նկատի ունեմ: Մեր պատմության մեջ չեմ հիշում մեկ այլ ժամանակահատված, ուր այսքան հաղթանակներ արձանագրեցին: Եվս մեկ բայ առաջացավ հայկական բանակը: Շատ է խոսվում մեր բանակի մարտունակության մասին, ուրիշների գնահատականներն ենք մեջբերում: Բայց փաստ է, որ այս բանակը շատ մեծ փորձությունների դեռ չի ենթարկվել: Եվ կա Ապրված, որ առիթ չունենա փորձությունների ենթարկվելու: Թե ինչ անուն կտան այս տարվան՝ պատմության խնդիրն է: Մեր խնդիրը այլ է՝ հզորանալ:*

- Որպես ՀՀ պաշտպանության նախարար ի՞նչ կարծիք ունեք այսօրվա ազգային բանակի մասին և ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել այն:

- Չեմ ուզում գնահատական տալ, միևնույնն է, իմ խոսքը սուբյեկտիվ է լինելու: Այս հարցի առիթով ուզում եմ դիմել մեր լրատվական միջոցներին՝ մի շտապեք ձեր գնահատականները բարձրաձայնել, ձեր անտեղի գովեստներով կամ հիշի-անհարկի բննադատությամբ դուք չեք օգնում բանակին: Բանակը արժանի է և կարիք ունի հասարակության հանանդիսանալու սիրուն: Որպես հայ մարդ՝ ես եմ հասկանում այն լրագրողին, որը չ՝ որ սխենդությամբ իր ազգային բանակը պ՝ գնում է ոչ այլ ինչ, բան «փուչիկ»: Այլ բ՝ ն է, երբ տեսնում են բանակում առկա թերությունները և ցույց տալիս այն շտկելու ուղիները, սա արդեն օգնություն է: Նույն՝ յ՝ լրագրողը, եթե որակելու փոխարեն բանակից խուսափող իր եղբոր, եղբորորդու կամ անհիշելի ցեղերը բռնած զինկոմիսարիատ առաջնորդեր, մեծ օգուտ կտար թե բանակին թե իր ազգին:

Ինչպիսի՞ն կուզենայի տեսնել: Ես պաշտպանության նախարար եմ և իմ ցանկությունները նույնիսկ, պետք է իրական հիմք ունենան: Ես կուզենայի տեսնել այնպիսին, ինչպիսին կկարողանանք այն դարձնել: Թվաբանակով քիչ, մարտունակությամբ և զինվածությամբ կատարյալ բանակ, որտեղ բոլոր ծառայները գործում են համամասնորեն, որպես մեկ օրգանիզմ: Եվ ամենակարևորը կարգապահ բանակ, որը կազմված կլինի հիմնականում զարգացիր ծառայության զինվորներից և մեծ պատրաստականություն ունեցող կադրային սպայական կազմից: Ուժեղ հակաօդային, հակատանկային պաշտպանություն՝ ավելի քիչ տեխնիկա, ավելի մեծ արդյունավետություն: Սա ցանկություն չէ, սա նպատակ է, որը ցգտում ենք իրագործել և կիրագործենք:

- Ինչպիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակն է:

- Նաև այո, բայց որպես ղեկույց ունենալով մեր հանրապետության պայմանները: Օրինակ՝ հզոր օդուժ ունենալը շատ թանկ է և հանրապետության ներկա տնտեսական պայմաններում դրան ցգտելը նպատակահարմար չէ, նույնքան թանկ է դրա սպասարկումը: Փոքր հրթիռով միշտ էլ կարելի է մեծ ինքնաթիռ խփել:

- ՀՀ պաշտպանության դեկը ստանձնեցիք աշնանային զորակոչի նախօրյակին: Հաջողվե՞ց Ձեր ցանկացած հունով տանել զորահավաքը:

- Աշնանային զորակոչը հիմնականում գնաց այն հունով, որով նախատեսել էինք: Պետք է շեշտեմ, որ Պետական զորակոչային հանձնաժողովի նախագահի պետնախարար Վազգեն Սարգսյանն էր: Նա իր վրա վերցրեց այդ զորահավաքի կազմակերպման ծանրությունը: Այս զորակոչը կազմակերպվեց ապրարածքային սկզբունքով: Շեկվեցին նախորդ զորակոչի ժամանակ թույլ տրված սխալները: Թարմություն ստացավ բժշկական ծառայության մեջ և վստահորեն կարող եմ ասել, որ բանակը համալրվեց ավելի առողջ երիտասարդներով: Թերություններ կան, մենք տեսնում ենք դրանք և ցգտում ենք վերացնել:

- ԼՂՀ պաշտպանության նախարարի պաշտոնում Ձեր դերը հստակ էր: Պատերազմ էր, Արցախն Արցախ էր, Ադրբեջանը՝ Ադրբեջան: Այդ հստակությունը չկա Հայաստանի Հանրապետությունում՝ ոչ այն է պատերազմ է, ոչ այն է՝ խաղաղություն: Քաղաքական անորոշության այս ճոճքը գլխապտույտ չի՞ առաջացնում Ձեզ մոտ: Կարողանու՞մ եք կողմնորոշվել:

- Համենայնդեպս փորձում եմ կողմնորոշվել: Ճիշտ բնութագրեցիք. ճոճվելու, ընկնելու և բարձրանալու պայմաններ են այստեղ: Քաղաքական տեսանկյունից՝ չկա պատերազմ, բայց թնդանոթներն ասում են՝ կա, շրջափակումն ասում է՝ կա, հանրապետության տնտեսական վիճակն ասում է՝ կա, սահմանամերձ շրջաններում իրենց զգում են պատերազմի մեջ: Շատ ավելի հնչգտ է, երբ պատերազմը հայտարարված է, գիտես թե ով է քո թշնամին, գիտես քո անելիքը: Քաղաքական այս ճոճքի հեղինակը մենք չենք: Աշխարհը բաժանված է ազդեցության ոլորտների, աշխարհում կան հզոր պետություններ, որոնք իրենց շահերն ունեն, աշխարհում կան այլևայլ միջազգային կազմակերպություններ, որոնց չես կարող հաշվի չառնել: Յուրաքանչյուրն իր կողմն է ցգում. հնազանդվելու իրավունք չունես՝ քո ազգային շահերն այլ բան են ասում, նրանց կարծիքը արհամարհելու իրավունք՝ առավել ևս չունես՝ դարձյալ քո ազգային շահերն ես վտանգում: Դե եկ ու կողմնորոշվիր: Հանրապետության որոշ քաղաքական կազմակերպություններ մեր քաղաքական գործիչներից պահանջում են «բայ իսաղ» , այն դեպքում, երբ «խաղաղաշունչ մշուշոտ է»: Մի հակասական և դաժան հանգամանք է: Մի հակասական և դաժան հանգամանք է: Մի հակասական և դաժան հանգամանք է